



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱԾՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մայիսի 2026 թվականի N 710

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքում Քանաքեռավան գյուղում Վազիր Լաթիֆի Միոյանին և Անահիտ Միշայի Միոյանին սեփականության իրավունքով պատկանող 07-064-0144-0016 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հասցե.

1.1 ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Քանաքեռավան, 19-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 15 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

12 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մայիսի 2026 թվականի N 711

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022թ. փետրվարի 18-ի «Նոր Հաճրն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին» N21-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Նոր Հաճրն քաղաքի Տոռոզյան փողոց, շենք 5, բնակարան 8 հասցեի բնակիչ Արտակ Նազարյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ որոշում եմ.

1. Համայնքի 2026 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. «Սոցիալական հատուկ արտոնություններ» հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 «Հուղարկավորության նպաստներ բյուջեից» հոդվածից 100000 (մեկ հարյուր հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակիչ Արտակ Նազարյանին, հորեղբոր՝ Դավիթ Նազարյանի թաղման ծախսերը հոգալու համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Ս. Բադայանին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

12 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 712

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԴԿԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022թ. փետրվարի 18-ի «Նոր Հաճրն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին» N21-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի թվով քսաներեք բնակիչների դիմումները, և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը՝ որոշում եմ.

1. Համայնքի 2026 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1 «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածից 665000 (վեց հարյուր վաթսունհինգ հազար) դրամի չափով ֆինանսական փոխհատուցում ցույց տալ սոցիալապես անապահով անձանց՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Ս. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

13 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 713

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԴՎԱԾԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022թ. փետրվարի 18-ի «Նոր Հաճրն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին» N21-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Նոր Հաճրն քաղաքի, Չարենցի փողոց, շենք 17, բնակարան 25 հասցեի բնակիչ Մարգո Ապրեսյանի դիմումը, և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը՝ որոշում եմ.

1. Համայնքի 2026 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1 «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածից ցույց տալ 100000 (մեկ հարյուր հազար) դրամի չափով դրամական օգնություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Ս. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

13 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 714

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքում Նոր Գեղի գյուղում Վահե Թամազյանին սեփականության իրավունքով պատկանող 07-048-0097-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հասցե.

1.1 ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Գեղի, Կոմիտասի փողոց, 19 մառան:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



13 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 715

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքին սեփականության իրավունքով պատկանող 07-006-0009-0015-ից կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հասցե.

1.1 ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, Աջափնյա փողոց, 112/4 ավտոտնակ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

13 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱԾՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 716

ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և 912-Ն որոշումների, որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի՝ **որոշում եմ՝**

1. Նոր Հաճրն համայնքում Աջափնյա փողոց 112/4 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 07-006-0009-0015-ից ծածկագրով, 0,0042 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամասում ինքնական կառուցված 71,6քմ մակերեսով ավտոտնակը (նկուղով) համարել Նոր Հաճրն համայնքի սեփականություն և ճանաչել օրինական (Հաշվառման ծածկագիր՝ 2026QS9GB2):

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը :

4. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր **Նվեր Քյարամի Բաղոյանին** սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 717

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքում Նաիր Սարիբեկյանին սեփականության իրավունքով պատկանող 07-006-0034-0013 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հասցե.

1.1 ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, Պարզևաշեն 3-րդ թաղամասի 1-ին փողոց, 76 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

13 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 718

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ

1. Նոր Հաճրն համայնքում Մրգաշեն գյուղում Ծովինար Զիվանի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /կադ. ծածկ. 07-046-0028-0010/ ըստ բաժանման սխեմայի տրամադրել հասցե.

1.1 Առանձնացվող հատված 1- 0,12513հա՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Մրգաշեն, 1-ին փողոց, 30 բնակելի տուն:

1.2 Առանձնացվող հատված 2- 0,06441հա՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Մրգաշեն, 1-ին փողոց, 8-րդ փակուղի, 12 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

13 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 719

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐԱՔՍԻ ԿԱՐԻՔՅԱՆԻՆ» ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 94-Ն որոշման N 2 հավելվածը, անհատ ձեռնարկատեր << Արաքսի Կարիքյանի >> ներկայացրած հայտը և N 229397105 վճարման անդորրագիրը՝ որոշում եմ

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր << Արաքսի Կարիքյանին >> (պետական հաշվառման համար՝ 80.1155022) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Քանաքեռավան գյուղի 20 փողոց 20 հասցեում գտնվող 17 քառակուսի մետր առևտրային մակերեսով հիմնական շինության ներսում 2026 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում իրականացնելու.

- 1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք.
 - 2) ծխախոտային արտադրատեսակների վաճառք.
- 2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

13 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 720

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԻՄԻՋ Մ. Գ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 94-Ն որոշման N 1 հավելվածը, «ԻՄԻՋ Մ. Գ.» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը և վճարման N 2081743662 հանձնարարագիրը՝ որոշում եմ

1. Տալ թույլտվություն «ԻՄԻՋ Մ. Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (պետական հաշվառման համար՝ 29.110.02216) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Տոռոզյան-Շահումյան խչմ., Բ կողմում, 18 քառակուսի մետր տարածքով այլ արտաքին գովազդ (նախընտրական քարոզչություն) տեղադրելու համար՝ 2026 թվականի մայիսի 8-ից 31-ն ընկած ժամանակահատվածում:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

13 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 721

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՍԻՐԱՆՈՒՇ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ» ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 94-Ն որոշման N 2 հավելվածը, անհատ ձեռնարկատեր «Սիրանուշ Նավասարդյանի» ներկայացրած հայտը և N 128052904 վճարման անդորրագիրը՝ որոշում եմ.

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր «Սիրանուշ Նավասարդյանին» (պետական հաշվառման համար՝ 80.01456) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Քանաքեռավան գյուղի 11 փողոցի թիվ 26/1 հասցեում գտնվող 43 քառակուսի մետր առևտրային մակերեսով հիմնական շինության ներսում 2026 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում իրականացնելու.

- 1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք.
 - 2) ծխախոտային արտադրատեսակների վաճառք.
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

13 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 722

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԷԳԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 94-Ն որոշման N 1 հավելվածը, «ԷԳԱ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը և վճարման N 664701852 հանձնարարագրերը՝ որոշում եմ

1. Տալ թույլտվություն «ԷԳԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (պետական հաշվառման համար՝ 264.110.01165) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Տոռոզյան և Ազատամարտիկներ փողոցների խաչմերուկ, Ա, Բ կողմում 36 քառակուսի մետր տարածքով այլ արտաքին գովազդ(երևան սիթի) տեղադրելու համար՝ 2026 թվականի մայիսի 1-ից մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



13 ՄԱՅԻՍԻ 2026
ք. Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 723

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ

1. Նոր Հաճրն համայնքում Նոր Արտամետ գյուղում Արթուր Վարդգեսի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին / կադ. ծածկ. 07-047-0009-0016/ տրամադրել հասցե.

1.1 ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Արտամետ, 3-րդ փողոց, 25 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

13 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 724

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ

1. Նոր Հաճրն համայնքում Նոր Արտամետ գյուղում Արտավազդ Վարդգեսի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /կադ. ծածկ. 07-047-0009-0001/ տրամադրել հասցե.

1.1 ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Արտամետ, 3-րդ փողոց, 23 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

13 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 725

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԻՄԻՋ Մ. Գ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԴ ՏԵՂԱԴԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2026 թվականի նոյեմբերի 28-ի N 94-Ն որոշման N 1 հավելվածը, «ԻՄԻՋ Մ. Գ.» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը և N 27650934 վճարման հանձնարարականը՝ որոշում եմ

1. Տալ թույլտվություն «ԻՄԻՋ Մ. Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (պետական հաշվառման համար՝ 29.110.02216) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Շահումյան-Չարենց խչմ. Բ կողմում, 18 քառակուսի մետր տարածքով (Նախընտրական քարտզարշավ) գովազդ տեղադրելու համար՝ 2026 թվականի մայիսի 8-ից մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

13 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 726

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԻՄԻՋ Մ. Գ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԴ ՏԵՂԱԴԴԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 94-Ն որոշման N 1 հավելվածը, «ԻՄԻՋ Մ. Գ.» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը և N 128919810 վճարման հանձնարարագիրը՝ որոշում եմ

1. Տալ թույլտվություն «ԻՄԻՋ Մ. Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (պետական հաշվառման համար՝ 29.110.02216) Կոտայքի մարզի Նոր Հաճրն, Նոր Գեղի ֆ. Թևոյան փ., (Հ5 Հ6 խաչմերուկ) Բ կողմում 18 քառակուսի մետր տարածքով արտաքին գովազդ (Նախընտրական քարոզարշավ) տեղադրելու համար՝ 2026 թվականի մայիսի 8-ից մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



13 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 727

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքում Քանաքեռավան գյուղում Արսեն Հակոբի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /կադ. ծածկ. 07-064-0386-0049/ տրամադրել հասցե.

1.1 ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Քանաքեռավան, 24-րդ փողոց, 7 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

13 ՄԱՅԻՍԻ 2026

ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2026 թվականի N 728

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքում Նոր Արտամետ գյուղում Ռոզիկ Հարությունի, Լևոն, Դարվին և Տարոն Ռազմիկի Ղազարյաններին սեփականության իրավունքով պատակող 07-047-0001-0022 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հասցե՝ ըստ բաժանման սխեմայի.

1.1 Առանձնացվող հատված 1 – 0,07971 հա ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Արտամետ, 4-րդ փողոց, 6-րդ նրբանցք, 8 հողամաս

1.2 Առանձնացվող հատված 2 – 0,04 հա ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Արտամետ, 4-րդ փողոց, 6-րդ նրբանցք, 10 հողամաս

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2026 թվականի N 729

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղում գտնվող Արամ Նորիկի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /կադ. ծածկ. 07-048-0065-0248/ տրամադրել հասցե ըստ բաժանման սխեմայի.

1.1 Առանձնացվող հատված 1՝ 0,11113հա-ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Գեղի, Աղբյուրակի փողոց, 3-րդ փակուղի, 7 բնակելի տուն

1.2 Առանձնացվող հատված 2՝ 0,02936հա-ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Գեղի, Աղբյուրակի փողոց, 3-րդ փակուղի, 7/2 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

14 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2026 թվականի N 730

**ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 5 ՇԵՆՔԻ 27 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 26-րդ, 30-րդ, 31-րդ կետերի և 32-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի, Հայաստանի Հանրապետության 2019թ նոյեմբերի 19-ի N 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ հունիսի 04-ի N 1023-Ն որոշմամբ, «Լուսազանձ» ՍՊԸ-ի 09.10.2024թ. եզրակացությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնական իրականացված կառույցը, ինքնական բացված 2 դուռը կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինքնական ձևափոխումն իրականացված չէ աստիճանավանդակների կամ շենքի արտաքին պատերի հաշվին, չեն փոխվել կրող կոնստրուկցիաներն ու սեփականատերերի բաժնային սեփականությունը, հիմք ընդունելով համասեփականատիրոջ դիմումը՝ որոշում եմ.

1. **Սեղա Վոլոդյայի Մովսիսյանին** սեփականության իրավունքով պատկանող (հիմք սեփականության վկայական 12072023-07-0112) Նոր Հաճրն համայնքի Հ.Թումանյան փողոցի 5 շենքի թիվ 27 բնակարանին կից ինքնական իրականացված **172,61քմ** արտաքին մակերեսով կառույցը, ինքնական բացված 2 դուռը, ինչպես նաև ներքին ձևափոխությունները համարել օրինական /չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանք 2026MEGXXC/

2. Սահմանել, որ օրինական են ճանաչվում նաև սույն որոշման 1-ին կետում նշված շենքում առկա, շենքի ծավալից դուրս՝ բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից իրականացված բոլոր ինքնական կառույցները:

3. Շինությունների զբաղեցրած հողամասն անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքով, փոխանցել Նոր Հաճրն համայնքի Հ. Թումանյան փողոցի 5 շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:

4. **Սեղա Վոլոդյայի Մովսիսյանը** պարտավոր է ինքնական իրականացրած շինության օրինականացման համար Նոր Հաճրնի համայնքապետարանի **900115102221** հաշվեհամարին վճարել **124570 (հայրուր քսանչորս հազար հինգ հարյուր յոթանասուն)** դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանրապետության պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2026 թվականի N 731

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 47-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Տոռնադո ֆեդերացիայի նախագահի 23.04.2026 թվականի գրությունը և տոռնադո ֆեդերացիայի մարզիչ Սամվել Ղազարյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Նոր Հաճրն համայնքի բնակիչներ՝ Ռաֆայել Գևորգյանին, Ռաֆայել Մկրտչյանին, Ալբերտ Գաբրիելյանին, Նժդեհ Մարտիրոսյանին և Մոնթե Խաչատրյանին ս/թ մայիսի 16-19 Վարաստանի Թիբլիսի քաղաքում կայանալիք GFL միջազգային առաջնությանը մասնակցելու համար՝ համայնքի 2026 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 08.2.4 «Այլ մշակութային կազմակերպություններ» ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4727 «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» հոդվածից հատկացնել 300000 (երեք հարյուր հազար) դրամ:

2. Հանձնարարել Նոր Հաճրնի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Ս. Բաղայանին՝ ապահովել ֆինանսավորումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

14 ՄԱՅԻՍԻ
2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2026 թվականի N 732

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 46-րդ հոդվածի պահանջներով **որոշում եմ**.

1. Ս/թ մայիսի 14-ին Նոր Հաճրն համայնքի հանրակրթական դպրոցների աշակերտներին դեպի ք. Երևանի Նուբարաշենի զորային հրաձգարան տեղափոխելու համար համայնքի 2026 թվականի բյուջեից՝ գործառնական դասակարգման 01.6.1 < Հանրային ծառայություններ > ծախսերի տնտեսագիտական 4229 <Այլ տրանսպորտային ծախսեր> հոդվածից հատկացնել 275.000(երկու հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ՝ տրանսպորտային ծախսերը հոգալու համար:
2. Հանձնարարել Նոր Հաճրնի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Ս. Բաղայանին ապահովել ֆինանսավորումը:
- 3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Սմբատյանի վրա:
- 4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



14 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2026 թվականի N 733

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2019թվականի նոյեմբերի 19-ի N225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշման՝ հիմք ընդունելով սեփականատիրոջ դիմումը, <Լուսագանձ> ՍՊԸ-ի 08.05.2026թ. եզրակացությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրա պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ որոշում եմ.

1. **Ռոստամ Մաջիտի Հասոյանին** սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճրն համայնքում Նոր Գեղի գյուղում 07-048-0064-0012 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 46,12քմ արտաքին մակերեսով կցակառույցը, 1,38 քմ արտաքին մակերեսով թոնրատունը, 20,86 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, 12,76քմ արտաքին մակերեսով անասնաշենքը, 2,12քմ մակերեսով պարիսպը ինչպես նաև ներքին հարդարման աշխատանքները համարել օրինական (հիմք՝ սեփականության վկայական 14102024-07-0060):

2. **Ռոստամ Մաջիտի Հասոյանը** պարտավոր է սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճրնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին վճարել **138620/հարյուր երեսունութ հազար վեց հարյուր քսան/** դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունվելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2026 թվականի N 734

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՅՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ
1. Նոր Հաճըն համայնքին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին / կար. ծածկ. 07-006-0022-0047-ից/ տրամադրել հասցե.

1.1 ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճըն համայնք, Պարզևաշեն 3-րդ թաղամասի 1-ին փողոց, 33 ապտոտնապ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



14 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճըն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2026 թվականի N 735

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և 912-Ն որոշումների, որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի՝ **որոշում եմ՝**

1. Նոր Հաճրն համայնքում Պարզևաշեն 3-րդ թաղամասի 1-ին փողոց 33 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 07-006-0022-0047-ից, 0048-ից ծածկագրով, 0,00667 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամասում ինքնական կառուցված 66,7 քմ մակերեսով ավտոտնակը համարել Նոր Հաճրն համայնքի սեփականություն և ճանաչել օրինական (Հաշվառման ծածկագիր՝ 2026APJ9CP):

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը :

4. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել **Լիանա Արկադինի Հայրապետյանին** սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2026 թվականի N 736

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղում գտնվող Արսեն Ժորայի Ավդալյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը վերահասցեավորել /կադ. ծածկ 07-048-0065-0120-ից, վկ. 07082017-07-0019/ և տրամադրել հասցե.

1.1. ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գ.Նոր Գեղի, Ֆ. Թևոսյան փողոց, 56 շենք, 25 բնակարան :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

14 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2026 թվականի N 737

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Մրգաշեն գյուղում գտնվող Գարիկ Գագիկի Հովհաննսիյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /կադաստրային ծածկագիր 07-046-0147-0030/ տրամադրել հասցե.

1.1. ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Մրգաշեն, 14-րդ փողոց, 7-րդ նրբանցք, 8 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

14 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2026 թվականի N 737/1

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղում գտնվող Սարգիս Վարազդատի Մադոյանին և նրա ընտանիքի անդամներին համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը վերահասցեավորել /կադ. ծածկ 07-048-0058-0083-ից, վկ. 359393/ և տրամադրել հասցե.

1.1. ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գ. Նոր Գեղի, Ֆ. Թևոսյան փողոց, 115 շենք, 3 բնակարան :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

14 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2026 թվականի N 738

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Արգել գյուղում գտնվող Արտյոմ Գրիշայի Եղիազարյանին համասեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /սեփականության վկայական 0247211 կադաստրային ծածկագիր 07-014-0101-0002 /տրամադրել նոր հացե

1.1 ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Արգել, 28 փողոց, 2-րդ նրբանցք թիվ 13 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

14 ՄԱՅԻՍԻ 2026
ք.Նոր Հաճրն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱԾՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2026 թվականի N 739

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքում Նոր Գեղի գյուղում Գևորգ Գագիկի Պողոսյանին և նրա ընտանիքին սեփականության իրավունքով պատկանող 07-048-0103-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հասցե՝ ըստ բաժանման սխեմայի.

1.1 Առանձնացվող հատված 1 – ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Գեղի, Ա.Խանջյան փողոց, 37/3 հողամաս

1.2 Առանձնացվող հատված 2 – ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Գեղի, Ա.Խանջյան փողոց, 37/2 հողամաս

1.3 Առանձնացվող հատված 3 – ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Գեղի, Ա.Խանջյան փողոց, 37/1 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2026թ. N 740

ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ
ՀԱՏԱԿԱԳԻԾ ՎԵՐԱԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ կառավարության 30.11.2006 թ. թիվ 1855-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Նոր Հաճրն համայնքի Հ. Թումանյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքին կից ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 25-րդ կետով նախատեսված ինքնակամ իրականացված կառույցները ճանաչել օրինական:
2. Նոր Հաճրն համայնքի Հ. Թումանյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Ընդունել ի գիտություն, որ Նոր Հաճրն համայնքի Հ.Թումանյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքին կից ինքնակամ իրականացված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Նոր Հաճրն համայնքի Հ.Թումանյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0,15637 հա, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածազնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 10-րդ գոտում:
